ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/36

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.02.2019թ. թիվ 26-3/1744-19 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 31.01.2019թ. թիվ ԴՎԱ/41 գրության հիման վրա, 08.02.2019թ. «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 31.01.2019թ. թիվ ԴՎԱ/41 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հայտեր են ներկայացրել թվով 7 մասնակիցներ, այդ թվում՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն:

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 2-րդ, 36-րդ և 43-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝ 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամաբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ, որոնց չափը գերազանցում է 50.000 ՀՀ դրամը: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշել է «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն 20.02.2019թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հիմնադրման օրվանից (հիմնադրվել է 31.08.1998թ.) երբևիցե ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել: Միաժամանակ 19.12.2018թ., 20.12.2018թ., 22.12.2018թ., և 24.12.2018թ. դրությամբ ընկերությունը հարկային պարտավորությունների գծով ունեցել է համապատասխանաբար 39.660.130 ՀՀ դրամ, 20.042.513 ՀՀ դրամ, 20.033.030 ՀՀ դրամ և 27.946.288 ՀՀ դրամի գերավճար:

Վերլուծելով բերված փաստարկները խնդրում ենք Ձեզ անվավեր ճանաչել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մեր ընկերությանը ներառելու հիմքերը:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Մանասե Եփրեմյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 08.02.2019թ. թիվ 26-3/1744-19 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2019թ. թիվ ԴՎԱ/41 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 27.12.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 23.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 20.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 19.12.2018թ. «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջոցով կատարված վճարման անդորրագրի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.01.2019թ. տրված եզրակացությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) մասնակցության հայտ է ներկայացրել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն:

Ընկերությունը էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի մասով կազմել է 248.349 ՀՀ դրամ, 36-րդ չափաբաժնի մասով՝ 69.335 ՀՀ դրամ, 43-րդ չափաբաժնի մասով՝ 689.033 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 27.12.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 3.1 կետով որոշել է Աճուրդի 2-րդ, 36-րդ և 43-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասկնակից ճանաչել «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին:

- 4.3 կետով որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասկնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.01.2019թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 6.331.558 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 23.01.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն, ուստի որոշել է «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն պարտավորությունները մարելու նպատակով 19.12.2018թ. «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջոցով կատարել է բանկային փոխանցում՝ 6.000.000 ՀՀ դրամ գումարի չափով, որի որպես նպատակ վճարման հանձնարարագրում նշվել է եկամտային հարկի գումար աշխատավարձից, սակայն ՀՀ պետական եկամուտների համակարգում հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը անհասկանալի պատճառներով երևացել է 24.12.2018թ.:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 19.12.2018, 20.12.2018թ. 22.12.2018թ. և 24.12.2018թ. դրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև Ընկերության կողմից 19.12.2018թ. «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջոցով կատարված վճարման անդորրագրի պատճենը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/15 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

- 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը a.maghaqyan@mil.am հասցեով գործող

էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.11 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների

մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.01.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (22.12.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 6.331.558 ՀՀ դրամ.

- Հարկային պարտավորությունները մարելու նպատակով՝ Ընկերությունը 19.12.2018թ. «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի միջոցով մուտքագրել է 6.000.000 ՀՀ դրամի չափով գումար.

- Ընկերության կողմից 19.12.2018թ. կատարված վճարումները ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համակարգում արտացոլվել են 24.12.2018թ..

- 24.12.2018թ. դրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը հաշվի առնելով, որ Ընկերության կողմից 19.12.2018թ. կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարում, սակայն հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համակարգում արտացոլվել է 24.12.2018թ., Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք, հետևաբար «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.02.2019թ. թիվ 26-3/1744-19 գրությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ